# ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ՇՈՒՇԻԻ ԱԶԱՏԱԳՐՄԱՆ 10-ԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Շուշիի ազատագրման 10-րդ տարեդարձի առիթով, մայիսի 8-ին, նամակ է հղել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախագահ Արկադի Ղուկասյանին՝ իր օրհնությունն ու շնորհավորանքը հայտնելով ԼՂ նախագահին և ողջ արցախահայությանը: Հեռագրում ասվում է.

*Մեծարգո Նախագահ*

*Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից ողջունում և Հայրապետական Մեր օրհնությունն ու շնորհավորանքներն ենք հղում Ձեզ և հավատավոր համայն արցախահայությանը՝ Շուշիի ազատագրման 10-րդ տարեդարձի առիթով:*

*Մեր ժողովրդի հազարամյա պատմությանը փառավոր նոր էջ հավելեց Շուշիի հերոսամարտը՝ շրջադարձային դառնալով Արցախի ազատագրության և հանուն հայրենի հողի, արդարության ու իրավունքի պաշտպանության Հայոց նոր պատերազմում:*

*Աշխարհասփյուռ մեր ողջ ժողովրդի հետ Մենք առանձնակի խնդությամբ ենք տոնում Շուշիի ազատագրության տասնամյա հոբելյանը՝ աղոթքով հիշելով վասն հայրենյաց իրենց կյանքը նվիրած մեր փառապանծ ազատամարտիկներին, որ երկնքից այսօր ուրախակից են մեզ:*

*Մեծապես ուրախ ենք, որ Շուշիի հերոսամարտի տասներորդ տարեդարձն իր ազատությունը նվաճած Արցախ աշխարհը դիմավորում է նոր կյանքի կառուցման հաջողություններով և ապագայի հանդեպ վստահությամբ ու լավատեսությամբ: Այսօր առ Աստված մեր աղոթքն է, որ Տերն Իր հանապազ խնամքի և օրհնության ներքո անխորտակ պահի Հայոց արևելյան բերդամրոցը՝ առաքյալների քարոզության հետքերը կրող սրբավայրերով և հերոսական իր ժողովրդով:*

*Թող Տերը պարգևի Ձեզ, հարգարժան պրն Ղուկասյան, և Ձեզ ծառայակից պետական այրերին քաջառողջություն և հայրենաշեն գործոց նորանոր հաջողություններ:*

*Օրհնությամբ՝*

**ԳԱՐԵԳԻՆ Բ**
**ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**